ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 2, 1959 Общественные науки

Գ. Բ. Ղարիբջանյան

ՍՏԵՓԱՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ 1907—1915 ԹԹ.

Անվանի բոլշևիկ-ռևոլյուցիոներ, Հայաստանի Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչ Ս. Կ. Ալավերդյանի (1888—1920) կյանքն ու ռևոլյուցիոն գործունեությունը մեր պատմական գրականության մեջ շատ քիչ է ուսումնասիրված[1]։ Երևթե ոչինչ չի արված մասնավորապես նրա, մինչև 1917 թ. ընդգրկող ռևոլյուցիոն պարտիական գործունեությանը վերաբերող նյութերի հավաքման և ուսումնասիրման ուղղությամբ։ Ս. Ալավերդյանի մասին միակ ֆոնդը գտնվում է ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվում[2]։ Սակայն այդ ֆոնդը երկար ժամանակ չի հարստացել նոր նյութերով և չի կարող քիչ թե շատ լրիվ պատկերացում տալ Ս. Ալավերդյանի բեղմնավոր պարտիական գործունեության մասին։ Բացի այս ֆոնդից, Ալավերդյանի մասին բազմաթիվ նյութեր են պահպանվել Մոսկվայի, Թբիլիսիի արխիվներում և գրադարաններում, Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի պետական պատմական արխիվում, ինչպես նաև առանձին ընկերների մոտ, որոնց հայտաբերումն ու գիտական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի լայն դաղափար կազմելու բոցաշունչ բոլշևիկի աշխատանքի մասին՝ նրա գործունեության բոլոր շրջաններում։

Ս. Կ. Ալավերդյան, լուսանկար, Մոսկվա, 1910 թ.։ Տպագրվում է առաջին անգամ։

[1] *Ս. Ալավերդյանի մասին մինչև այժմ հրատարակվել են մի քանի հիշողություններ և հոդվածներ պարբերական մամուլում, մեկ բրոշյուր՝ «Ստեփան Ալավերդյան», (Երևան, 1952, 37 էջ) և մեկ հոդված Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրում» (Հասարակական գիտություններ, 1951, № 11, էջ 41—57)։*

[2] *Այս ֆոնդը պարունակում է 21 գործ՝ 58 թերթից։ Այդ գործերն Ս. Ալավերդյանի չորս հոդվածը՝ հրապարակված 1917թ. «Կավկազսկի ռաբոչի» թերթում, մամուլից արտատպված և անտիպ մի քանի հոդվածներ և, հիշողություններ. փաստաթղթեր նրա դնդակահարության մասին և Ալավերդյանի մինչև այժմ հայտնի միակ լուսանկարից կազմված բացիկը՝ տպագրված մայիսյան ապստամբության 10-րդ տարեդարձի կապակցությամբ։ 20-րդ գործը՝ նրա համառոտ կենսագրությունն է, հայտնի չէ, թե ում կողմից կազմված և սխալմամբ վերնագրված «Համառոտ ինքնակենսագրություն»։*

Մեր այս հոդվածի նպատակն է, մի շարք նորահայտ նյութերի հիման վրա լուսաբանել Ս. Ալավերդյանի ռևոլյուցիոն գործունեության Մոսկվայի ժամանակաշրջանը (1907—1915), որը գրեթե բոլորովին չի ուսումնասիրված։ Մինչդեռ այդ տարիներին Ս. Ալավերդյանը պարտիայի հանձնարարականով եռանդուն ռևոլյուցիոն աշխատանք է տանում ուսանողության և բանվորների շրջանում։ Լինելով Առևտրական ինստիտուտի ուսանող, Ս. Ալավերդյանը դեկավար դեր է կատարում ինստիտուտում բոլշևիկյան կազմակերպություն ստեղծելու և այն ամրապնդելու գործում։ Այս դժվարին ժամանակաշրջանում Ս. Ալավերդյանը Մոսկվայի առաջավոր պրոլետարական կենտրոններից մեկի՝ Զամոսկվորեցկի շրջանի բոլշևիկյան դեկավար կորիզի մեջ էր մտնում և աչքի էր ընկնում որպես պարտիական շնորհալի պրոպագանդիստ ու կազմակերպիչ։

Հեղինակը բնավ չի կասկածում, որ առաջիկայում կգտնվեն նոր նյութեր և փաստաթղթեր, կգրվեն նոր աշխատություններ, որոնք հիմք կհանդիսանան Ս. Ալավերդյանի մասին գիտական լուրջ մենագրություն ստեղծելու, մի բան, որի անհրաժեշտությունը վաղուց զգացվում է[3]։

* * *

Ստեփան Կարապետի Ալավերդյանը ծնվել է 1888 թ. օգոստոսի 13-ին[4] Դուբայիս քաղաքում։ Նրա ռևոլյուցիոն գործունեությունն սկսվել է դեռևս աշակերտական տարիներին՝ ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին։ Ռևոլյուցիայի ժամանակաշրջանում Ալավերդյանը որպես բոլշևիկ գործիչ պարտիական կազմակերպությունների հանձնարարությամբ ակտիվ աշխատանք է տանում հատկապես ուսանողության շրջանում։

1907 թ. ավարտելով Դուբայիսի ռեալական ուսումնարանը, Ս. Ալավերդյանը մեկնում է Մոսկվա՝ կրթությունը շարունակելու։

Այս այն ժամանակաշրջանն էր, երբ ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Մոսկվայում բանվոր դասակարգը ռևակցիայի հարվածների տակ ստիպված էր ժամանակավորապես նահանջել։ Մինչև 1910 թ. գնալով նվազում էր բանվորական գործադուլների քանակը, փոխվում էր նաև նրանց բնույթը՝ հարձակողականից դառնալով պաշտպանողական։ Ցարական ռևակցիան ուժեղ հարվածներ էր հասցնում բոլշևիկյան կազմակերպություններին։ Մեկը մյուսի հետևից ձերբակալվում էին Մոսկվայի պարտիական կազմակերպության դեկավարներն ու շարքային անդամները։

[3] Հեղինակը շնորհակալություն է հայտնում Ս. Ալավերդյանի ռևոլյուցիոն պայքարի ընկերներին՝ հին բոլշևիկներ Վլադիմիր Պետրովիչ Զերոտարյովին և Յակով Ֆեոդորովիչ Բոգոմոլովին, նրա քրոջը՝ Մարգարիտա Կարապետովնա Ալավերդովային, ինչպես նաև համապատասխան արխիվների աշխատակիցներին՝ Ալավերդյանի վերաբերյալ մի շարք նյութեր իրեն տրամադրելու համար։

[4] Մինչև վերջերս պատմական գրականության մեջ Ս. Ալավերդյանի ծննդյան թիվը գրվել է սխալ՝ 1889 թ., 1888-ի փոխարեն։ Չնայած հայտնաբերված միանգամայն հավաստի փաստաթղթերին, այդ և նրա կյանքի ու ռևոլյուցիոն գործունեության վերաբերյալ մի շարք այլ փաստաթղթեր շարունակվում են սխալ ներկայացվել ընթերցողներին։ Այդ անճշտությունները տեղ են գտել նաև „Борьба за победу Советской власти в Грузии" (Թբիլիսի, 1938) փաստաթղթերի և նյութերի ժողովածուի՝ Ս. Ալավերդյանի մասին ծանոթագրության մեջ (տե՛ս, էջ 727—728)։

Ռևոլյուցիայի շատ ժամանակավոր ուղեկիցներ, հատկապես բուրժուական և մանրբուրժուական ինտելիգենտական շրջաններից, լքում են ռևոլյուցիան։ Հիասթափությունը, անկումայնությունն ու թերահավատությունը լայնորեն ընդգրկում է նաև ուսանողությանը։

Հետագայում (1917) այս տարիների մասին Ս. Ալավերդյանը գրել է. «...Այդ այնպիսի ժամանակաշրջան էր, երբ Նիկոլայ II-ի կառավարության հարվածների տակ ջախջախվեցին բանվորական և ուսանողական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները։

Հասարակական անկումայնության էպոխայի ազդեցությամբ ուսանողական մասսաները դուրս եկան ռևոլյուցիոն-դեմոկրատական ուղուց, տարվելով զանազան մոդայական ռեակցիոն հոսանքներով՝ «Մանիհիզմով», «Վեխականությամբ» և այլն։ Մնացին միայն ոչ մեծ սոցիալ-դեմոկրատական ուսանողական կազմակերպություններ և չնայած արտաքին խոչընդոտներին, ընթանում էին ռևոլյուցիոն պրոլետարիատի հետ...»[5]։

Սակայն, չնայած ցարիզմի այս դաժան հարձակումներին, ռևոլյուցիոն շարժումները և բոլշևիկյան աշխատանքները Մոսկվայում շարունակվում են։ Ռեակցիայի ժամանակավոր հաղթանակի պայմաններում Մոսկվայի բոլշևիկները, հաղթահարելով բոլոր դժվարությունները, չենթարկվելով խուճապի, անշեղ կերպով նախապատրաստում էին պրոլետարիատին նոր մարտերի։

Այս շրջանում Վ. Ի. Լենինի ցուցումներով Մոսկվայի բոլշևիկյան կազմակերպության ամրապնդման գործում մեծ դեր են կատարում պարտիայի ակտիվ գործիչներ Յա. Մ. Սվերդլովը, Մ. Ի. Կալինինը, Ի. Ֆ. Դուբրովինսկին, Ռ. Ս. Զեմլյաչկան, Ս. Ի. Ուլյանովան, Վ. Պ. Նոգինը, Մ. Ն. Լյադովը, Ի. Ի. Սկվորցով-Ստեպանովը, Օ. Ա. Վարենցովան, Պ. Գ. Սմիդովիչը և ուրիշներ։

Մոսկվայի բոլշևիկները կազմակերպչական ու պրոպագանդիստական խոշոր աշխատանք են տանում ոչ միայն բանվորների, այլև ուսանողության և ինտելիգենցիայի մեջ։ Նրանք ստեղծում ու ամրապնդում են նաև պարտիական խմբերը ուսումնական հաստատություններում։

Գնալով Մոսկվա, Ալավերդյանը մեծ ցանկություն ուներ ընդունվել Մոսկվայի համալսարանը, գիտության այդ հռչակավոր օջախը, որտեղ սովորել էին ռուս ժողովրդի շատ հռչակավոր զավակներ, ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատներ Բելինսկին, Գերցենը, Օգարևը։

Սակայն համալսարանն ընդունվելու համար Ս. Ալավերդյանի գործադրած բոլոր ջանքերն իզուր են անցնում։ Նրա դռները դժվար էին բացվում աշխատավոր ժողովրդի զավակների համար։ 1907 թ. հունիս-օգոստոսին ցարական իշխանությունների մի շարք հրահանգներով ու կարգադրություններով խիստ հետապնդվում էին ուսանողներն ու ուսանողական ընտրովի կազմակերպությունները, շատ է դժվարանում ընդունելության կարգը։ Ցարական մինիստրության 1907 թ. օգոստոսի 1-ի հրահանգով համալսարաններում բոլոր ընդունվել ցանկացողներից պահանջվում էր «տեղական ոստիկանության վկայականը անթերի վարքի մասին»։ Ուսանողության ռևոլյուցիոն մասը համալսարաններից մասսայականորեն հեռացվում էր[6]։

[5] «Կավկազսկի ռաբոչի», 27 ապրիլի 1917։

[6] Տե՛ս „История Московского университета", т. I, изд. Московского университета, 1955, стр. 531.

Համալսարանի ղեկավարության անբարյացակամ վերաբերմունքի և նյութական ծանր պայմանների հետևանքով Ս. Ալավերդյանին չի հաջողվում իրականացնել իր վաղեմի երազը՝ սովորել Մոսկվայի համալսարանում։ Բայց գիտության ծարավը և ռևոլյուցիոն գործչի կորովը նրան ստիպում են մնալ Մոսկվայում։ Շատ դժվարություններ հաղթահարելով, Ալավերդյանը ադմինիստրացիայից գաղտնի դասախոսություններ է լսում համալսարանում, համառ աշխատանքով լրացնում է իր գիտելիքները։

«Չնայած նյութական անհրաժեշտությանը, ես այնուամենայնիվ չթողեցի Մոսկվան և չգնացի հեռավոր հայրենիք,—գրում է Ալավերդյանը իր ինքնակենսագրության մեջ,—որովհետև ծարավ էի գիտությունների և մեկ տարի շարունակ, դժվարությամբ մտնելով լսարաններ, դասախոսություններ էի լսում»[7].

1908 թ. աշնանը Ս. Ալավերդյանին հաջողվում է ընդունվել Մոսկվայի Առևտրական ինստիտուտի տնտեսագիտական բաժանմունքը։

Մոսկվայի Առևտրական ինստիտուտը[8] հիմնադրվել էր 1907 թ. Առևտրական կրթության տարածման Մոսկվայի ընկերության կողմից, նրա խնդիրն էր պատրաստել ծառայողների որակյալ կադրեր արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունների համար։ Ինստիտուտը գտնվում էր առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի գերիշխող ազդեցության տակ և նրա հովանավորությամբ արագորեն աճում էր։ 1907 թ. նա ուներ 1215 ուսանող, 1910 թ.՝ 3105, իսկ 1913 թ.՝ 4500[10]։ Ուսանողների կազմը բազմազգ էր։ Այստեղ սովորում էին, բացի ռուսներից, վրացիներ, հայեր, հրեաներ, ադրբեջանցիներ և այլ ազգերի ներկայացուցիչներ, մեծ մասամբ առևտրական շրջաններից՝ վաճառականների և գործարանատերերի զավակներ։ Սակայն ինստիտուտում սովորում էին նաև դեմոկրատական խավերի ներկայացուցիչները։

Ինստիտուտի ուսումնական պլանում մեծ տեղ էր գրավում սոցիալ-տնտեսական և իրավաբանական գիտությունների դասավանդումը, որը և գրավել էր Ս. Ալավերդյանի ուշադրությունը։ Այդ տարիներին նա հնարավորություն է ունենում խորապես ուսումնասիրելու մարքսիզմը, ռևոլյուցիոն և սոցիալիստական շարժումների պատմությունը, առաջավոր հասարակական ուսմունքները։ Զբավարարվելով ինստիտուտի ծրագրով սահմանված հասարակական գիտությունների ուսումնասիրությամբ և դասավանդող բուրժուական-կադետական ռեակցիոն դասախոսների դասախոսություններով, Ալավերդյանը մեծ եռանդով ուսումնասիրում է մարքսիստական գրականությունը՝ Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատությունները, ուշադիր հետևում է բոլշևիկյան մամուլին։

Ստեփան Ալավերդյանի հիշատակին նվիրված հոդվածում, խոսելով նրա Առևտրական ինստիտուտում սովորելու և ռևոլյուցիոն գործունեության մասին, Ա. Մռավյանը գրել է. «...Այս ինստիտուտը դեմոկրատական ուսանողության բունն էր համարվում, այնտեղ էին հավաքվել 1905—1907 թթ. հեղափոխական փոթորիկներից անցած մի քանի հազար երիտասարդներ։ Ստեփանը ան-

[7] МОГИА, ф. 417, оп. 7, д. 843, л. 3.

[8] Այժմ Գ. Վ. Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտ։

[9] Տե՛ս „История Москвы", т. V, Москва, 1955, стр. 454.

[10] Տե՛ս նույն տեղում։

միջապես տարվում է ինստիտուտի մթնոլորտով և հինգ տարի[11] անընդհատ ապրում է նրա դիտական հեղափոխական շնչով։ Ոչ մի վայրկյան չէր մոռանում 1905 թվականի հեղափոխական դասերը, իրեն հատուկ եռանդով մասնակցում էր ուսանողական շարժումներին»[12]։

Դեռևս Մոսկվայի համալսարանում դասախոսությունների հաճախելիս Ալավերդյանը կապվում է այնտեղի բոլշևիկ ուսանողներ Ա. Ֆ. Մյասնիկյանի, Գ. Ի. Կորգանովի, Ս. Գ. Հովսեփյանի և ուրիշների հետ, ակտիվ մասնակցում ուսանողական շարժումներին։

Առևտրական ինստիտուտում սովորելու տարիներին Ալավերդյանը շարունակում է իր ռևոլյուցիոն աշխատանքը՝ Մոսկվայի քաղաքային պարտիական կազմակերպության Զամոսկվոռեցկի շրջանային կոմիտեի ղեկավարությամբ։

Զամոսկվոռեչյեն, որն այժմ ընդգրկում է Լենինյան, Կիրովյան և Զամոսկվոռեցկի ռայոնները, արդյունաբերական, պրոլետարական շրջան էր և միաժամանակ Մոսկվայի վաճառականության յուրահատուկ կենտրոնը։ Այնտեղ էին գտնվում Միխելսոնի գործարանը (այժմ Վլադիմիր Իլյիչի անվան գործարան), Բանիլովյան մանուֆակտուրան (այժմ Ա. Վ. Ֆրունզեի անվան գործարան), Ալեքսեևի ֆաբրիկան (այժմ Մ. Ի. Կալինինի անվան), Բրոմլեյի գործարանը (այժմ «Կրասնի պրոլետարի»), Բրոկար ֆաբրիկան («Նովայա զարյա») և այլ արդյունաբերական ձեռնարկություններ՝ հազարավոր բանվորներով։ Մոսկվայի պրոլետարիատի ռևոլյուցիոն շարժման մեջ Զամոսկվոռեցկի շրջանի դերը հսկայական էր։

Ահա թե ինչու Մոսկվայի բոլշևիկները հատուկ ուշադրություն էին դարձնում Զամոսկվոռեչյեի պրոլետարիատի մեջ տարվող ռևոլյուցիոն աշխատանքին։ Այնտեղ կար ուժեղ պարտիական կազմակերպություն, որի ղեկավարությամբ շրջանի բանվորները ակտիվ մասնակցություն ունեցան ռուսական առաջին ռևոլյուցիային։ «Բոլշևիկների Զամոսկվոռեցկի կազմակերպությունը Մ. Ի. Ուլյանովայի միջոցով կապված էր ՌՍԴԲՊ (բոլշևիկների) արտասահմանյան կենտրոնի հետ, որը ղեկավարում էր Վ. Ի. Լենինը։

Մ. Ի. Ուլյանովան Զամոսկվոռեցկիի բոլշևիկներին մատակարարում էր «Սոցիալ-դեմոկրատ» թերթը, Վ. Ի. Լենինի բրոշյուրները և այլ անլեգալ գրականություն»[13]։

Առևտրական ինստիտուտի բոլշևիկ ուսանողները շրջանային կոմիտեի անմիջական ղեկավարությամբ ռևոլյուցիոն աշխատանք էին կատարում և՛ ինստիտուտում, և՛ բանվորների մեջ։

Ռեակցիայի տարիներին կատարելով պարտիայի Զամոսկվոռեցկի շրջանային կոմիտեի բազմաթիվ հանձնարարությունները, Ս. Ալավերդյանը դառնում է ինստիտուտում ուսանողական շարժումների ակտիվ կազմակերպիչներից մեկը։ Ուսանողների մեջ նա տարածում է անլեգալ մարքսիստական գրականություն, բոլշևիկյան թերթեր ու թռուցիկներ, հաճախակի լինում է բանվորական շրջաններում, ֆաբրիկաներում, գործարաններում, հանրակացարաններում, մոտիկից ուսումնասիրում բանվորների կյանքն ու կենցա-

[11] Ա. Մռավյանը նկատի ունի Ալավերդյանի ինստիտուտում սովորելու տարիների տևողությունը - Դ. Լ.

[12] «Խորհրդային Հայաստան», 1921, № 104։

[13] „Октябрь в Замоскворечье", М.—Л., 1957, стр. 23.

ղը, ռևոլյուցիոն աշխատանք ծավալում նրանց մեջ՝ պարապելով բանվորական խմբակներում։

Մոսկվայից Ալավերդյանը սերտ կապ է պահպանում Քութայիսի բոլշևիկների հետ, իսկ արձակուրդներին և ուսման հարկադրական ընդհատումների ժամանակ գալով Քութայիս, մասնակցում է քաղաքում տարվող ռևոլյուցիոն պարտիական աշխատանքներին։

* * *

1910 թ. նոյեմբերին, որս հանճարեղ գրող Լև Տոլստոյի մահվան կապակցությամբ ուժեղանում են ուսանողական շարժումները։ 1910 թ. ամռանից Ռուսաստանում սկսվել էր բանվորական շարժման նոր վերելքը։ Մոսկվայի պրոլետարիատն ընթանում էր այդ վերելքի ավանդարդում։ Բանվոր դասակարգի պայքարի աշխուժացումը առաջացրել էր երկրում համադեմոկրատական շարժման և մասնավորապես ուսանողական շարժման աճ։ «Պրոլետարիատը սկսել է,—գրում էր Վ. Ի. Լենինը 1910 թ. դեկտեմբերին «Ցույցերի սկիզբը» հոդվածում,—դեմոկրատական երիտասարդությունը շարունակում է։ Ռուս ժողովուրդը արթնանում է նոր պայքարի, ընդառաջում է նոր ռևոլյուցիայի»[14]։ Այս նույն հոդվածում նշելով մասնավորապես ուսանողական ցույցերի աճը, Վ. Ի. Լենինը գրել է. «Լև Տոլստոյի մահն առաջ է բերում երկար ընդմիջումից հետո առաջին-փողոցային ցույցերը՝ առավելապես ուսանողների, բայց մասամբ նաև բանվորների մասնակցությամբ...»[15]։

Պարտիայի առաջնորդը, մեծ ուշադրություն դարձնելով ուսանողական շարժումներին, բոլշևիկների առաջ խնդիր էր դնում ղեկավարել ու ճիշտ ուղղություն տալ նրանց։

1910 թ. նոյեմբերի 14-ին Մոսկվայի ուսանողները ակտիվ մասնակցություն են ունենում Լև Տոլստոյի մահվան կապակցությամբ ծավալվող փողոցային ցույցերին։ Նրանց առաջավոր շարքերում էին գտնվում բոլշևիկ-ուսանողները։ Ըստ ժամանակակիցների հիշողությունների, Ս. Ալավերդյանը այդ բոլշևիկների մեջ էր։ Կովկասցի ուսանողների հայրենակցությունը („Земляческо") նրան որպես իրենց ներկայացուցչի ուղարկում է Յասնայա Պոլյանա՝ մասնակցելու Լ. Ն. Տոլստոյի թաղմանը[16]։

Բանվորական շարժման վերելքի տարիներին պարտիայի Մոսկվայի կոմիտեի[17] ղեկավարությամբ բոլշևիկյան խմբեր ու կազմակերպություններ են ձևավորվում[18] նաև Զամոսկվորեցկի շրջանի մի քանի ձեռնարկություններում և Առևտրական ինստիտուտում։

---

[14] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 16, էջ 467։

[15] Նույն տեղում, էջ 466։

[16] Տե՛ս Ս. Ալավերդյանի քրոջ՝ Մարգարիտա Ալավերդովայի հուշերը։

[17] Ցարական իշխանությունների դաժան հետապնդումների հետևանքով ՌՍԴՐՊ(բ) Մոսկվայի կոմիտեն մի քանի անգամ ջախջախվում է։ Սակայն բոլշևիկների եռանդուն գործունեության հետևանքով նա կրկին ու կրկին վերակազմվում է, ամրապնդում կապերը տեղական կազմակերպությունների հետ և ղեկավարում նրանց աշխատանքը (տե՛ս ՍՄԿՊ Մոսկվայի կոմիտեին կից Պարտիայի պատմության ինստիտուտի արխիվ, Մոսկվայի կոմիտեի թղթապանակը)։

[18] Մինչև 1912 թ. աշունը Մոսկվայի բոլշևիկյան կազմակերպությունում հաշվվում էր 25 խումբ և ջիջ, որոնք միավորում էին պարտիայի մոտ 400 անդամ (Տե՛ս „Вопросы истории", 1954, № 7, стр. 43).

Առևտրական ինստիտուտի բոլշևիկյան կազմակերպությունը ստեղծվել է 1912 թ. սկզբին, իր մեջ ընդգրկելով մինչ այդ աշխատող բոլշևիկ ուսանողների և նոր ընկերների։ Կազմակերպության մեջ սկզբում մտնում էին Ստեփան Ալավերդյանը, Յուրի Միշկինը[19], Հ. Վարդանյանը, Արտեմ Ակոպովը, Իվան Նեչաևը, Վլադիմիր Չեբոտարյովը[20], Ալեքսանդր Ֆոկինը[21], Միխայիլ Նեստերովը[22] և ուրիշներ։

Հետագայում կազմակերպության շարքերն ընդլայնվում են։ 1912-1916 թթ. նրա մեջ են մտնում ինստիտուտի ուսանողներ Յա. Բոգոմոլովը, Կ. Օստրովիտյանովը, Լ. Ակոլսկին, Ս. Կիրիլովը, Ն. Ֆոկինը, Մ. Ալոպյանկին, Լուսիկ Լիսինյանը, Աննա Կոլպակովան, Եկատերինա Կարմանովան, Լյուդմիլա Չեսնակովա-Հայրապետյանը և ուրիշներ։

Առևտրական ինստիտուտի նախկին ուսանող, 1914 թ. այդ ինստիտուտի բոլշևիկյան կազմակերպության անդամ, այժմ ակադեմիկ Կ. Վ. Օստրովիտյանովը իր հիշողություններում պատմելով ինստիտուտի բոլշևիկ ուսանողների ընդհատակյա ռևոլյուցիոն մեծ աշխատանքի մասին, գրում է. «Մոսկվայի առևտրական ինստիտուտի բոլշևիկ ուսանողների խումբը որպես պարտիական կազմակերպություն ձևավորվել է 1912 թ. սկզբին։ Նրա կազմում սկզբում մտնում էին Ս. Ալավերդովը, Յու. Միշկինը, Ա. Ակոպովը, Նեչաևը, Վ. Չեբոտարյովը, Ա. Ֆոկինը, Մ. Նեստերովը»[23]։

Ինստիտուտի բոլշևիկյան կազմակերպությունը աստիճանաբար ընդլայնում է իր շարքերը։ Բոլշևիկ ուսանողները բազմաթիվ կապերով կապված էին ֆաբրիկաների ու գործարանների հետ, ղեկավարում էին բանվորական խմբակները, թափանցելով ձեռնարկությունները, մասնակցում էին բանվորների միտինգներին, մասսայական ժողովներին, հավաքույթներին։ Նրանք կազմում, տպագրում և տարածում էին ռևոլյուցիոն թռուցիկներ։

Վ. Պ. Չեբոտարյովը և Յա. Ֆ. Բոգոմոլովը, որոնք ապրում և աշխատում են Մոսկվայում, մեզ հետ զրուցելիս պատմեցին, որ Ս. Ալավերդյանը Առևտրական ինստիտուտի բոլշևիկյան կազմակերպության հիմնադիր և ղեկավար գործիչներից էր, որը մեծ հեղինակությամբ էր օգտվում ռևոլյուցիոն ուսանողության շրջանում։

---

[19] Միշկին Յուրի Սոկրատովիչ (1895-1943)—սովորել է Մոսկվայի առևտրական ինստիտուտում, 1912 թ. բոլշևիկյան պարտիայի անդամ, եղել է ՌՍԴԲՊ(բ) Մոսկվայի կոմիտեի անդամ, պարտիայի Զամոսկվորեցկի շրջկոմի ագիտատոր, ՌՍԴԲՊ(բ) 6-րդ համագումարի դելեգատ՝ Մոսկվայի պարտիական կազմակերպությունից, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ակտիվ մասնակից։

[20] Չեբոտարյով Վլադիմիր Պետրովիչ (ծնվ. 1894 թ.)—Մոսկվայի առևտրական ինստիտուտի ուսանող, բոլշևիկյան պարտիայի անդամ 1912 թ., վերջին տարիներին աշխատել է Մոսկվայի Գ. Վ. Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտում, որպես փիլիսոփայության ամբիոնի դոցենտ, այժմ անհատական թոշակառու։

[21] Ֆոկին Ալեքսանդր Նիկիտիչ սովորել է Մոսկվայի առևտրական ինստիտուտում, բոլշևիկյան պարտիայի անդամ 1908 թ., վախճանվել է 1944 թ.։

[22] Նեստերով Միխայիլ Վասիլևիչ (ծնվ. 1892 թ.)—սովորել է Մոսկվայի առևտրական ինստիտուտում, բոլշևիկյան պարտիայի անդամ 1912 թ., այժմ Համամիութենական առևտրական պալատի նախագահ։

[23] „Октябрь в Замоскворечье", стр. 22.

Ինստիտուտի պարտիական կազմակերպության հիմնական կորիզն այն ժամանակ պայմանականորեն «ծերերը» („старики") էին անվանում, իսկ Ալավերդյանին կատակով՝ «հին ուսանող», նկատի ունենալով նրա երկարամյա ուսումը։

Ս. Ալավերդյանը բոլշևիկների Զամոսկվոռեցկի շրջանային կոմիտեի պարտիական կազմակերպիչն ու ագիտատորն էր։ Ուսանողների և գործարանի բանվորների մեջ նա պրոպագանդում էր մարքսիզմի գաղափարները, պարապում էր անլեգալ խմբակներում։ Միաժամանակ նա հաջողությամբ օգտագործում էր մարքսիզմի լեգալ պրոպագանդայի ձևերը։ Ինստիտուտում սեմինար պարապմունքների ժամանակ, նվիրված քաղաքատնտեսության և փիլիսոփայության հարցերին, նա գիտական վեճի էր մտնում դասախոսների հետ և ուսանողների ներկայությամբ շարադրում մարքսիստական տեսակետներ։ Ժամանակակիցները հիշում են Ալավերդյանի կրակոտ ելույթները ինստիտուտի ռեկրեացիոն դահլիճում և մասնավորապես ուսանողական ճաշարանում։

Առևտրական ինստիտուտի ուսանողական ճաշարանը, որը կազմակերպվել էր Հայրենակցական միությունների կողմից 1913 թ., գտնվում էր Մալայա Սերպուխովկայի (այժմ Լյուսինովսկայա փողոց) 28 տանը։ Ճաշարանն ուներ վարչություն, որտեղ գերակշռում էին բոլշևիկների ներկայացուցիչները։ Առևտրական ինստիտուտի ճաշարանը դառնում է Զամոսկվոռեչյեի ռևոլյուցիոն շարժման կենտրոնը։ Այնտեղ սիստեմատիկաբար հավաքվում էին ոչ միայն ռևոլյուցիոն ուսանողները, այլև Զամոսկվոռեչյեի բանվորները, կազմակերպում էին անլեգալ խմբակներ, ժողովներ, տպագրում թռուցիկներ, կարդում բոլշևիկյան թերթեր, սովորում ռևոլյուցիոն երգեր[24]։ «Ճաշարանը յուրահատուկ ռևոլյուցիոն ակումբ էր, — գրում է Կ. Վ. Օստրովիտյանովը, — նրա շուրջը խմբավորվել էին ռևոլյուցիոն ուսանողները և բանվորները, այնտեղ տեղի էին ունենում քաղաքական թեմաներով զեկուցումներ և դիսպուտներ, կազմակերպվում էին բազմապիսի խմբակներ, ինչպես նաև ռևոլյուցիոն բովանդակությամբ համերգներ։ Քիչ չէր պատահում, որ երբ ներքևում երգում էին ռևոլյուցիոն երգեր, զվարճանում էին և պարում, վերևում մեկուսի սենյակներում տեղի էին ունենում անլեգալ ժողովներ, նշվում էին մերձակա ելույթները, քննարկվում էին թռուցիկների բովանդակությունը և այլն... ճաշարանում կազմակերպվող դասախոսություններին և դիսպուտներին մասնակից էին դարձվում բազմաթիվ բանվորներ»[25]։

Առևտրական ինստիտուտի նախկին ուսանողներից մեկը, հին բոլշևիկ, այժմ անհատական թոշակառու Կալերիա Պավլովնա Բալակինան իր հիշողություններում պատմում է. «Մալայա Սերպուխովկա № 28-ում գտնված ուսանողական ճաշարանը այն կենտրոնն էր, որտեղ խմբերով հավաքվում էին բոլոր ռևոլյուցիոն տարրերը — ոչ միայն Առևտրական ինստիտուտի ուսանողները, այլև Զամոսկվոռեչյեի բանվորները։ Նա գտնվում էր մի հին, բարձիթողի արված առանձնատանը՝ կողքից եկող աստիճաններով, և մի քանի ելքերով,

[24] Մինչև Փետրվարյան ռևոլյուցիան ինստիտուտի ուսանողական ճաշարանը Զամոսկվոռեչյեի բոլշևիկների դաղտնի բնակարանն էր, իսկ Փետրվարյան ռևոլյուցիայից հետո այնտեղ տեղավորված էր շրջանային ռեկոմը։ Ճաշարանի շենքը երկհարկանի էր, ուներ վերնահարկ — մեզոնին — Գ. Ղ.։

[25] „Октябрь в Замоскворечье", стр. 22.

աշտարակներով և ընդարձակ նկուղով ու գետնահարկերով, որոնք բարեհաջող պայմաններ էին ստեղծում անլեգալ ռևոլյուցիոն աշխատանք տանելու համար։

Այստեղ հավաքվում էին ընդհատակյա սոցիալ-դեմոկրատական խմբակները, կազմակերպում էին անլեգալ ժողովներ, տպագրում էին թռուցիկներ, տեղի էին ունենում դիսկուսիաներ, կարդում էին բոլշևիկյան թերթեր, սովորում էին ռևոլյուցիոն երգեր։

Բոլշևիկ-ճաշարանականների (большевики—столовцы), ինչպես հետագայում սկսեցին նրանց անվանել, շուրջը համախմբված դեմոկրատական ուսանողների խումբը բավականին մեծ էր։ Ճաշարանում մենք անցկացնում էինք մեր ժամանակի մեծ մասը, իսկ անօթևաններն այնտեղ էլ գիշերում էին»[26]։

Ս. Ալավերդյանը ակտիվ դեր է կատարել այդ ուսանողական ճաշարանի ստեղծման գործում և նրա վարչության անդամներից էր։ Նա ճաշարանում կազմակերպված միջոցառումների, լեգալ և անլեգալ ժողովների, դասախոսությունների և դիսպուտների, թռուցիկների տպագրման, անլեգալ դրականության պրոպագանդայի ղեկավարներից և ակտիվ մասնակիցներից էր։ Ծավալելով ակտիվ ռևոլյուցիոն աշխատանք, Ս. Ալավերդյանն առանձնակի անողոքությամբ էր հանդես գալիս բուրժուական նացիոնալիզմի բոլոր տեսակի դրսևորումների դեմ, մեծ հետևողականությամբ ու վճռականությամբ պաշտպանում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները։

Հատկապես իմպերիալիստական պատերազմի նախօրեին և պատերազմի ընթացքում, երբ շովինիզմի և նացիոնալիզմի վարակը ավելի ու ավելի էր տարածվում՝ ընդգրկելով ուսանողության լայն շրջանները, Ս. Ալավերդյանը եռանդ չէր խնայում ուսանողության միջից արմատախիլ անելու նացիոնալիզմի թույնը, մերկացնում էր ազգային սկզբունքով կազմակերպված «վրացական», «հայկական» և այլ հայրենակցությունները։ Հիանալի տիրապետելով ռուսերենին և վրացերենին, զինված լինելով մարքսիզմի ինտերնացիոնալիստական գաղափարներով, նա իր անձնական կյանքում և աշխատանքում հավատարիմ ինտերնացիոնալիստի հիանալի օրինակ էր ցույց տալիս։ Կյանքի և ռևոլյուցիոն պայքարի նրա մտերիմ ընկերների մեջ միշտ կարելի էր տեսնել ռուսներ, վրացիներ, հայեր, հրեաներ, ադրբեջանցիներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ։

Ս. Ալավերդյանի ուսանողական ընկերներից մեկը, հին բոլշևիկ Միխայիլ Կախյանին[27] Ալավերդյանի հիշատակին նվիրված մի հոդվածում գրել է. «...Նա անդադար պայքարում էր բուրժուական ուսանողության դեմ, միշտ անխնա և կտրուկ լինելով, նա անվերջ խարազանում էր մամանների սնած որդիներին, ակադեմիստներին, կադետներին և ուրիշ շատ շատերին։ Առևտրական ինստիտուտի ուսանողության ձախ թևը միշտ հավաքվում էր Զամոսկվոռեչյեի հայտնի «ճաշարանում», որին բուրժուական ուսանողությունը «մարքսիզմի ճահիճ» անունն էր տվել։

---

[26] „Октябрь в Замоскворечье", стр. 60.

[27] Կախյանի Միխայիլ Իվանովիչ (1896—1937)—ՍՄԿԿ անդամ 1917 թ., ռևոլյուցիոն պարտիական աշխատանք է տարել Մոսկվայում, Բաքվում, Բաքվում։ 1927—1930 թթ. աշխատել է որպես Վրաստանի Կոմպարտիայի Կենտկոմի քարտուղար, 1930 թ. Համկ(բ)Կ Միջինասիական բյուրոյի քարտուղար։

...Բուրժուական տարրերը շատ անգամ կատաղի հարձակումներով ճգնել են մեզ դուրս անել այդ «ճահճից», բայց «դեմոկրատական» ուսանողությունը (այդպես էինք մենք համեստորեն անվանում մեզ, մի քանի հայտնի նկատառումներից ելնելով) ամուր կպել էր «ճահճի» պատերից և համառ կերպով դիմադրում էր բոլոր հարձակումներին։

Այդ կռիվների ժամանակ Ստեփանը հանդես էր գալիս և հաղթ ձայնով բոլորին հետ տալիս, գրա համար սեհարյուրակային և բուրժուական կադետական ամբոխը ընկ. Ստյոպային ատելով ատում էր։

Ընկ. Ստյոպան ինտերնացիոնալիստ-ռևոլյուցիոներ էր և շովինիզմի ոխերիմ թշնամի։ Երբ ուսանողության բուրժուական և ազգային տարրերը բաժանվում են և կազմում «վրացական», «հայկական» և այլ հայրենակցություններ և ազգային քաղաքականություն վարում, ընկ. Ստյոպան շատ հեռու է կանգնում նրանցից և միանում ինտերնացիոնալիստական միությանը, մեր կովկասյան հայրենակցությանը»[28]։

Մոսկվայում Ալավերդյանի ռևոլյուցիոն գործունեությունը չէր սահմանափակվում միայն Առևտրական ինստիտուտի և Զամոսկվոռեցկի շրջանի սահմաններով, նա եռանդուն կերպով կատարում էր նաև քաղաքային կազմակերպության հանձնարարությունները, լինում էր Մոսկվայի մյուս շրջաններում, ինչպես նաև գյուղերում (Զվյագինո, Իոգոռոդսկոյե և այլն), բոլշևիկյան պրոպագանդա մղելով աշխատավորական մասսաների մեջ։ Ինստիտուտի բոլշևիկյան կազմակերպության անդամը լինելուց բացի, նա միաժամանակ աշխատում էր Ա. Ֆ. Մյասնիկյանի ղեկավարած բոլշևիկյան խմբակի մեջ, որի անդամներն էին Գ. Աթաբրեկյանը, Էմմա Մելիք-Աթաբրեկովան, Հովհաննիսյանը և ուրիշներ։

Ս. Ալավերդյանը ակտիվ մասնակցություն է ունենում Մոսկվայի պրոլետարիատի 1912 թ. ապրիլ-մայիսյան[29] մասսայական ելույթներին, որոնք անմիջական պատասխան էին Լենայի բանվորների գնդակոծմանը ցարական դահիճների կողմից։ Ինստիտուտի բոլշևիկյան կազմակերպության ակտիվ գործիչ Ա. Ֆոկինը պատմում է, որ երբ Լենայի գնդակահարության լուրերը հասան Մոսկվա, իրենց պարտիական խումբը, թռուցիկ հավաքույթ գումարելով, որոշեց բողոքի բանաձև ընդունել և ի նշան սգո հայտարարել եռօրյա գործադուլ։ Ուսանողների ելույթը ճնշելու համար գործի է անցնում ոստիկանությունը, դիմելով մտրակների ուժին։ Այդ օրերին Ալավերդյանը ռևոլյուցիոն աշխատանք է տանում ոչ միայն ուսանողների, այլ նաև բանվորների մեջ, լինում է Իրոմլեյի գործարանում, Դանիլովյան մանուֆակտուրայում և այլ ձեռնարկություններում, մասնակցում այնտեղի գործադուլներին ու ցույցերին։

1912 թ. նոյեմբերին Առևտրական ինստիտուտի ուսանողները ակտիվ կերպով արձագանքեցին Մոսկվայի մի շարք ֆաբրիկաների և գործարանների բանվորների գործադուլային ելույթներին, որոնց առիթը Սևծովյան նավատորմի ապստամբության մասնակիցների դատն ու նրանց մահապատժի դատապարտելն էր 1912 թ. հոկտեմբերին։ Նոյեմբերի 12-ին ուսանողները կազ-

---

[28] «Կոմունիստ», 1920, № 80։

[29] Միայն Մայիսի մեկին Մոսկվայում գործադուլ էին հայտարարել 38 հազար բանվոր՝ 132 ձեռնարկություններում (Տե՛ս „Вестник Московского университета", 1947, № 4, стр. 24).

մակերեսային բողոքի միտինգ, որը ոստիկանության կողմից ցրվեց զենքի ուժով։ Այդ ոստիկանական ջոկատների հրամանատար գեներալը հրամայում է «քշել ու հարվածել այդ անպիտաններին»[30]։ Վ. Ի. Լենինը բարձր է գնահատել 1912 թ. նոյեմբերյան գործադուլներն ու ցույցերը ի պաշտպանություն նավաստիների։

Սակայն այս հետապնդումները չեն ընկճում ինստիտուտի բոլշևիկների կողմից ղեկավարող առաջավոր ուսանողներին։

1912—1913 թթ. Ալավերդյանը պարտիայի հանձնարարականով գործոն մասնակցություն է ունենում 4-րդ Պետական դումայի ընտրական կամպանիային՝ ագիտացիոն աշխատանք տանելով բանվորների մեջ, մասնակցելով նախընտրական նյութերի տպագրության կազմակերպմանը։ 1913 թ., երբ Մոսկվայի պրոլետարիատի հերոսական ջանքերով, բոլշևիկների ղեկավարությամբ լույս էր տեսնում „Наш путь“[31] բանվորական լեգալ թերթը, Ալավերդյանը այնտեղ տպագրված լենինյան և մյուս բոլշևիկյան հոդվածների բովանդակությունը հասցնում էր բանվորների և ուսանողների գիտակցությանը, դրամական միջոցներ էր հավաքում թերթի համար, մասնակցում թերթի տարածման կազմակերպմանը։

Հին բոլշևիկ Հովսեփ Պողոսյանը[32], որը Առևտրական ինստիտուտում սովորել է Ս. Ալավերդյանի հետ և նրան լավ գիտեր երկար տարիների համատեղ պարտիական աշխատանքից, այս ժամանակաշրջանի նրա ռևոլյուցիոն գործունեության մասին պատմում է.

«...Բոլոր ուսանողական լեգալ և անլեգալ ժողովներում, որոնք կրում էին այս կամ այն քաղաքական բնույթը, միշտ ներկա էր ամեն տեղ լինող ու ամեն բանի մեջ խառնվող Ս. Ալավերդյանը և ոչինչ չէր կարող անցնել առանց Ստյոպայի մասնակցության, կրակոտ խրախուսանքի ու ճառերի. որոնք շատ գեղեցիկ էին իրենց դասավորությամբ, ապշեցուցիչ իրենց տոնով, հարուստ բովանդակությամբ ու գործնական իրենց վերջավորությամբ. միշտ և ամեն տեղ նա էր, որ բողոքում էր կոմպրոմիսների ու զանազան տատանումների դեմ և վճռական ու անշեղ էր իր գործնական վարքագծով, որը միշտ հանգում էր բողոքի, կռվի, գործադուլի... Չնայած նա իր անձնական կյանքում ավելի քան բարի էր, կորեկտ ու օժտված ինտելիգենտ մարդու բոլոր գեղեցիկ հատկություններով, այնուամենայնիվ, գաղափարական կռվում նա կատաղորեն գիտեր քննադատել ու դատապարտել իր ամենամոտ ընկերներին՝ գաղափարական հակառակորդներին ու նրանց նկատմամբ անողոք էր ու միշտ ծաղրի առարկա էր դարձնում յուրահատուկ սրամտությամբ ու կոմիզմով, որով և աղքատ չէր նրա նատուրան... Միշտ որոնող, անհանդիստ ու չբավարարվող Ստյոպան իր գործունեությունը չէր

---

30 Տե՛ս „История Москвы“, т. V, стр. 259.

31 1913 թ. օգոստոս-սեպտեմբերին լույս տեսավ թերթի 16 համար. որից տասում տպագրված էին Վ. Ի. Լենինի հոդվածները։ Թերթի տիրաժը հասավ 17 20 հազար օրինակի։

32 Պողոսյան Հովսեփ Համբարձումի (1886—1937)—ՌՍԴԲՊ-ի անդամ 1904 թ. ռևոլյուցիոն աշխատանք է կատարել Թիֆլիսում, ապա Մոսկվայում։ 1916—1917 թթ. աշխատել է Սարիդամիշում։ Մասնակցել է քաղաքացիական կռիվներին Հյուսիսային Կովկասում։ 1919—20 թթ. ակտիվ ռևոլյուցիոն գործունեություն է ծավալում Հայաստանում։ Սովետական կարգերի հաղթանակից հետո պարտիական և սովետական ղեկավար աշխատող էր։

սահմանափակում ուսանողական և այլ ինտելիգենտական շրջանակներով, նա ավելի քան գործնական էր և որպես կատարյալ մարքսիստ նա գիտեր, թե որտեղ պետք է տարածել կոմունիստական գաղափարները ու դասակարգային կռվի սկզբունքները, նա որոնում էր ու գտնում այդ մթնոլորտը բանվորական ներքին խավերում, գլխավորապես Զամոսկվոռեչյեի շրջանի գործարաններում, որի համար նա ստեղծել էր և տեխնիկական հարմարություններ ապրելով այդ շրջանում: Նա ոչ միայն իր գաղափարները տարածում էր բանվորական անլեգալ խավերում, այլ ամեն տեղ՝ փողոցում, ճաշարանում, երրորդ կարգի ռեստորաններում և ուր այդ հնարավոր էր գտնում և նպատակահարմար[33]:

Մոսկվայի պահնորդական բաժինը իր գործակալների միջոցով սիստեմատիկաբար հետևում էր Առևտրական ինստիտուտի բոլշևիկների, այդ թվում նաև Ս. Ալավերդյանի ռևոլյուցիոն գործունեությանը, բայց կոնկրետ «հանցանքներ» գտնել նրանց չէր հաջողվում: Չնայած դրան, բոլշևիկ ուսանողները բազմիցս ձերբակալվում են: 1914 թ. մարտի կեսին ինստիտուտի բոլշևիկների ամբողջ խումբը ձերբակալվում է: Երեք ամիս գտնվելով բանտում, նրանք այստեղ ևս չեն դադարեցնում իրենց քաղաքական աշխատանքը: Ա. Ֆոկինը իր հուշերում պատմում է, որ Յակիմանկի բանտը կալանավոր բոլշևիկների համար լավ դպրոց եղավ, այնտեղ նրանք ստեղծեցին կոմունա, կարդում էին թերթեր, գրքեր, քննարկում քաղաքական իրադարձությունները և խորացնում գերմաներեն լեզվի իրենց գիտելիքները: Մասնավորապես մեծ եռանդով նրանք ուսումնասիրեցին Կարլ Մարքսի «Կապիտալի» երկու հատորները: 1914 թ. հունիսին «հանցանշաններ» չգտնելու պատճառով նրանց ստիպված են լինում ազատել բանտից:

Սակայն հետապնդումները Առևտրական ինստիտուտի բոլշևիկների դեմ շարունակվում են:

Պրովոկատոր Պոսկրեբուխինը[34] 1915 թ. փետրվարի 4-ին իր գաղտնի գրություններից մեկում հաղորդում էր, որ «...Մոսկվայի առևտրական ինստիտուտին կից կազմակերպվել է սոցիալիստական խումբ, որն իր գործունեության նպատակն է դարձրել լայն մասսաների մեջ սոցիալիստական գաղափարների տարածումը:

Այդ նպատակով նախատեսվում է պարբերաբար հրատարակել թռուցիկներ, որոնց տպագրության համար արդեն գոյություն ունի «տեխնիկա» (հեկտոգրաֆ կամ շապիրոգրաֆ):

Բացի դրանից, խումբը նախատեսում է հնարավորին չափ աջակցություն ցույց տալ ընդհանրապես բոլոր սոցիալիստական կազմակերպություններին, թռուցիկներ տպագրելու համար նրանց տրամադրության տակ դնելով իր «տեխնիկան»:

Ներկայումս նախապատրաստական աշխատանք է տարվում և մշակվում է գործունեության պլան, որի համար խմբի անդամները կազմակերպում են

---

[33] «Խորհրդային Հայաստան», 1922, № 265:

[34] Ա. Ա. Պոսկրեբուխինը Մոսկվայի պահնորդական բաժանմունքի գաղտնի գործակալներից էր: 1912—1916 թթ. «Եվգենիի» ծածկանվան տակ նա սիստեմատիկաբար տեղեկություններ էր հաղորդում պարտիայի Մոսկվայի մի շարք կազմակերպությունների, այդ թվում նաև Առևտրական ինստիտուտի բոլշևիկների գործունեության մասին:

մասնավոր խորհրդակցություններ գերազանցապես ուսանողական ճաշարանի շենքում (Առևտրական ինստիտուտի)։

Այդ խմբի մեջ մտնող անձերից հայտնի են «Բանոն»[35], նա ինքը Իվան Մինաևիչ, Վարդանյանց Հովհաննես անձնական պատվավոր քաղաքացի, Առևտրական ինստիտուտի ուսանող (անցյալ տարվա մարտին ձերբակալվեց ուսանողների ժողովում 13 մարդկանց թվում), Նեստերով, Ֆոկին—ուսանողական ճաշարանի վարիչը և «Ստյոպա» (Ստեփան Կարապետովիչ)։

Ցարական պրովոկատորի այս հաղորդումից երևում է, որ Առևտրական ինստիտուտի բոլշևիկների գործունեության շատ կողմեր նրան դեռևս հայտնի չէր։ 1914 թ. փետրվարի 25-ին Մոսկվայի բոլշևիկյան կազմակերպության ղեկավար կոմիտեի առաջադրանքով ստեղծվում է քաղաքային ուսանողական պարտիական կոմիտե՝ բաղկացած հինգ հոգուց[36]։ Այս կոմիտեն միավորում էր բարձրագույն ուսումնական հաստատությունների, այդ թվում նաև Առևտրական ինստիտուտի պարտիական կազմակերպությունը, որի անդամները ակտիվ մասնակցություն ունեին կոմիտեի աշխատանքներին։

* * *

1914 թ. իմպերիալիստական պատերազմի սկզբին Մոսկվայի բոլշևիկյան կազմակերպությունները ցարիզմի ուժեղացող հետապնդումների հետևանքով նոր ծանր հարվածներ են ստանում.

Չնայած շատ դժվարին պայմաններին, Մոսկվայի բոլշևիկները, զինված իրենց նախընթաց ռևոլյուցիոն պայքարի լենինյան փորձով, կարողանում են հենց պատերազմի սկզբից ճիշտ գնահատել նրա իմպերիալիստական, գավթողական բնույթը։ Սակայն նրանք դեռևս պարզ պատկերացում չունեին պատերազմից դուրս գալու ուղիների մասին։ Այդ բոլորը նրանց համար պարզ դարձավ այն բանից հետո, երբ 1914 թ. հոկտեմբեր-նոյեմբերին ստացան և ուսումնասիրեցին լենինյան թեզիսները, պարտիայի Կենտկոմի մանիֆեստը պատերազմի մասին, որտեղ պարզ ու որոշակի նշված էր, որ «ժամանակակից իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի փոխարկելը պրոլետարական միակ ճիշտ լոզունգն է»[37]։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մոսկվայի բոլշևիկները, հավատարիմ լենինյան սկզբունքներին, բարձր պահելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ռևոլյուցիոն մարքսիզմի դրոշը, իրենց շուրջն են համախմբում նաև Մոսկվայի ուսանողության առաջավոր մասին, ուղղություն են տալիս և ղեկավարում նրանց ռևոլյուցիոն պայքարը։

Այս պայքարին բոլշևիկների ղեկավարությամբ ակտիվ մասնակցություն ունեցան նաև Առևտրական ինստիտուտի առաջավոր ուսանողները։ Երբ սկսվեց պատերազմը, Մոսկվայի հետադիմ ուսանողությունը, այդ թվում նաև հիշյալ ինստիտուտի ուսանողները հավատարմության հեռագիր ուղարկեցին Ռուսաստանի թագավոր Նիկոլայ Երկրորդին։ Այսպիսի պայմաններում, երբ շովինիստական վարակը տարածվում էր ուսանողության մեջ, բոլշևիկները մեծ աշխատանք տարան ուսանողությանը իմպերիալիստական պատերազմի դեմ հանելու համար։ Դեռ պատերազմի սկզբին նրա դեմ ակտիվ կերպով դուրս

[35] Հավանաբար պետք է լինի «Վանոն» — Գ. Ղ.
[36] „Вопросы истории", 1954, № 7, стр. 46.
[37] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 26։

եկան Պետրովսկու գյուղատնտեսական ակադեմիայի, Մոսկվայի առևտրական ինստիտուտի և Շանյավսկու անվան ժողովրդական համալսարանի ուսանողների առաջավոր մասը[38]: Բոլշևիկ ուսանողները դեկավարում էին պայքարը բուրժուական պրոֆեսորների, դասախոսների շովինիստական, նացիոնալիստական տրամադրություններով համակված ուսանողների դեմ, նրանք հրատարակում էին թռուցիկներ՝ ընդդեմ պատերազմի ու պաշտպանողականության: Առևտրական ինստիտուտի ուսանողները, բոլշևիկյան կազմակերպության դեկավարությամբ գումարված իրենց հավաքույթում, բանաձև են ընդունում ռեակցիոն պրոֆեսոր Վիշնեսլավցևի դասախոսությունները, որոնց մեջ նա շովինիստական պրոպագանդա էր անում, բոյկոտի ենթարկելու մասին[39]:

1914 թ. հոկտեմբերին, Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու կապակցությամբ Առևտրական ինստիտուտում տեղի է ունենում ուսանողության հավաքույթ, որտեղ կատաղի վիճաբանություններ են գնում բուրժուական և դեմոկրատական ուսանողության միջև: Ելույթ ունեցող բոլշևիկ ուսանողները հանդես են գալիս «հայրենասիրական» մանիֆեստացիաների դեմ և պրոպագանդում են ինտերնացիոնալիստական դաղափարներ: Հավաքույթը վերջանում է ռևոլյուցիոն երգեր երգելով, ռեակցիոն ուսանողները երգում էին մոնարխիստական երգեր: Գործին միջամտում է ոստիկանությունը[40]:

Այս ժամանակաշրջանում ցարական պահնորդական վարչության «տվյալներով», մասնավորապես Մոսկվայի համալսարանի և Առևտրական ինստիտուտի սոցիալ-դեմոկրատ ուսանողների մեջ պլան է մշակվում ստեղծել սոցիալ-դեմոկրատական ուսանողական կոլեկտիվ, որի անդամները պետք է դառնային պրոպագանդիստներ բանվորների մեջ: Այդ կոլեկտիվի կազմակերպման նախաձեռնողները կապվում են քաղաքի բոլշևիկյան դեկավար խմբի հետ և ակտիվ կերպով աշխատում կոլեկտիվի անդամներ հավաքագրելու համար[41]:

Պատերազմի տարիներին Մոսկվայի պարտիական կազմակերպություններին, այդ թվում նաև Առևտրական ինստիտուտի կազմակերպությանը մեծ օգնություն է կազմակերպում Մ. Ի. Ուլյանովան, որն այն ժամանակ աշխատում էր Զեմսկո քաղաքային միության գաղթականության բաժնում որպես գործավար: Այնտեղ էին աշխատում նաև ինստիտուտի առանձին բոլշևիկ ուսանողներ (Կ. Վ. Օստրովիտյանովը և ուրիշներ), որոնց միջոցով Մ. Ի. Ուլյանովան անլեգալ գրականություն էր տարածում: Ռևոլյուցիոն ուսանողներն ստացան պատերազմի դեմ ուղղված Լենինի բրոշյուրները, բոլշևիկյան «Սոցիալ-դեմոկրատ» թերթը և արտասահմանում ու այլ տեղերում հրապարակված գրականություն:

Ժանդարմական գործերն ու ժամանակակիցների հիշողություններն ապացուցում են, որ համաշխարհային պատերազմի հենց սկզբից Ալավերդյանը վճռականորեն հանդես է գալիս պատերազմի դեմ, իսկ քիչ հետո, երբ ստանում և քննարկում են լենինյան թեզերը պատերազմի մասին, նա ակտիվ մասնակցություն է ունենում իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու մասին բոլշևիկյան պարտիայի լոզունգի իրագործման համար մղված պայքարին: Պատերազմի և ռևոլյուցիայի հարցե-

[38] «История Москвы», т. V, стр. 308.
[39] Տե՛ս նույն տեղում, էջ 309:
[40] Տե՛ս «Вопросы истории КПСС, 1957, № 3, стр. 186—187.
[41] Տե՛ս «История Московского университета», т. 1, стр. 518.

բում նա համոզված ու հաստատակամորեն կանգնած էր լենինյան դիրքերի վրա և անողոք պայքար էր մղում բուրժուա-նացիոնալիստական, շովինիստական վարակի դեմ։ Պարտիայի հանձնարարությամբ նա բանվորների ու ուսանողների մեջ եռանդուն աշխատանք էր տանում նրանց դասակարգային ինքնագիտակցությունն ու քաղաքական գիտակցությունը բարձրացնելու համար։

Հովսեփ Պողոսյանը «Թանկագին ընկերոջս հիշատակին» հոդվածում պատմում է Ս. Ալավերդյանի՝ իմպերիալիստական պատերազմի դեմ ունեցած երկու կրակոտ ելույթների մասին, որոնց ինքն ականատես է եղել։ Մի ելույթը տեղի էր ունեցել 1914 թ. նոյեմբերին Առևտրական ինստիտուտի մեծ դահլիճում՝ ուսանողական ժողովում, Պետական դումայի բոլշևիկյան ֆրակցիայի անդամների ձերբակալման կապակցությամբ։ Այդ ելույթում մերկացնելով պատերազմի իմպերիալիստական բնույթը, Ալավերդյանը բացականչում է. «Կորչի իմպերիալիստական պատերազմը, կեցցե դասակարգային պայքարը»։ Ելույթից հետո Ալավերդյանը իր ռեոլյուցիոն ընկերների հետ միասին ինստիտուտի երկրորդ հարկից ցրում է բոլշևիկյան թռուցիկներ և, ճեղքելով հարձակվող ոստիկանության շարքերը, թաքնվում[42]։

Ս. Ալավերդյանի մյուս ելույթը տեղի է ունենում Մոսկվայի համալսարանի ճաշարանում՝ հայ ուսանողության ընդհանուր ժողովում, որտեղ քննարկվում էր թուրքական ռազմաճակատում հայ կամավորական շարժմանը վերաբերմունք ցույց տալու հարցը։ Հայտնի է, որ առաջին համաշխարհային պատերազմի շրջանում շատերը մոլորվել էին «հայրենիքի պաշտպանության» շովինիստական լոզունգով, իսկ հատկապես հայ ուսանողությունը տարվել էր կամավորական ջոկատներ ստեղծելու գաղափարով։ Բոլշևիկյան կազմակերպությունները, վճռականորեն հանդես գալով կամավորական շարժման լոզունգի դեմ, ցույց էին տալիս նրա ավանտյուրիստական բնույթն ու վնասակարությունը հայ ժողովրդի համար, նրանք ելնում էին իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմով փոխարինելու լենինյան լոզունգից։ Ս. Ալավերդյանի և նրա բոլշևիկ ընկերների ելույթները ժողովում առգորված էին այդ ոգով[43]։

Ունենալով կայուն բոլշևիկ գործիչներ, Առևտրական ինստիտուտի բոլշևիկյան կազմակերպությունը շուտով պատերազմի, խաղաղության և ռեոլյուցիայի հարցերում լիովին կանգնում է լենինյան դիրքերի վրա և հետևողական կերպով պաշտպանում այն։ «1915 թ. սկզբին Առևտրական ինստիտուտի բոլշևիկյան կազմակերպությունը,— գրում է Կ. Վ. Օստրովիտյանովը,— լիովին ընդունում է Լենինի դրույթը իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու մասին և Պետական դումայի բոլշևիկյան ֆրակցիայի դեմ դատի կապակցությամբ թռուցիկ է բաց թողնում՝ ընդդեմ պատերազմի»[44]։

Փետրվարի 10 (23)-ին ցարական իշխանությունները դատ են նշանակում 4-րդ Պետական դումայի հինգ բոլշևիկ բանվոր-դեպուտատների՝ Ա. Ե. Բադաևի, Գ. Ի. Պետրովսկու, Մ. Կ. Մուրանովի, Ֆ. Ն. Սամոյլովի և Ն. Ռ. Շագովի դեմ, որոնք մեղադրվում էին «պետական դավաճանության մեջ»՝ Դու-

---

42 «Սորհրդային Հայաստան», 1922, № 266։

43 Տե՛ս նույն տեղում։

44 „Вопросы истории КПСС", 1957, № 3, стр. 187.

մայում և բանվորական մասսաների առաջ իմպերիալիստական պատերազմների դեմ ելույթներ ունենալու համար։

Այս դատի կապակցությամբ, բոլշևիկների ղեկավարությամբ մեծ կամպանիա է կազմակերպվում ամբողջ երկրում։ Տեղի են ունենում բողոքի գործադուլներ, ցույցեր, մասսայական ժողովներ։ Հրատարակվում և տարածվում են բազմաթիվ թռուցիկներ։ Բոլշևիկները մասսաներին բացատրում էին ցարական դատարանի կողմից բանվոր-դեպուտատների դեմ հարուցած մեղադրանքի իսկական իմաստը։

Այս ուղղությամբ մեծ աշխատանք են ծավալում նաև Առևտրական ինստիտուտի բոլշևիկները։ Նրանք մասնակցում են բանվորական գործադուլներին, կազմում և տպագրում են թռուցիկներ։

Ցարական իշխանությունները ուժեղ հարձակումներ կազմակերպեցին բանվոր-դեպուտատների դատավարության կապակցությամբ անցկացվող կամպանիայի դեմ։ Մասսայական խուզարկություններն ու ձերբակալությունները տարածվեցին նաև Առևտրական ինստիտուտի ուսանողության մեջ։ Ապրիլի 26-ին խուզարկում են Ս. Ալավերդյանին և 10 այլ ուսանողների (Ա. Ա. Վեյսբրոդ, Վ. Պ. Զերոտարյով, Ա. Ա. Շուման, Ս. Պ. Կիրիլով, Ի. Լ. Նեչաև, Ա. Ն. Ֆոկին, Ա. Մ. Միտկին, Լ. Դ. Սոկոլսկի, Վ. Պ. Տրուսով և Ե. Ս. Դարչիա)։ Խուզարկություն է տեղի ունենում նաև Առևտրական ինստիտուտի ճաշարանում։

Ս. Ալավերդյանը և մյուս 10 ուսանողները ձերբակալվում են, բայց նրանց մոտ «մերկացնող» նյութեր չգտնելու հետևանքով շուտով ազատ են արձակվում։

* * *

Ս. Ալավերդյանը 1914 թ. հունիսին ավարտում է ինստիտուտի լրիվ դասընթացը[45] և ձեռնամուխ լինում ուսումնասիրելու «Ինակարանային հարցը Մոսկվայում» թեման։ Մինչև 1915 թ. հոկտեմբերը նա լսում է լրացուցիչ դասախոսություններ, հանձնում է պետական քննություններ և ավարտելով դիպլոմային աշխատանքը՝ հաջողությամբ պաշտպանում է այն, ստանալով տնտեսական գիտությունների թեկնածուի կոչում[46]։

Մոտ ութը տարի սովորելով և աշխատելով Մոսկվայում, լինելով Մոսկվայի բոլշևիկյան կազմակերպության ակտիվ անդամներից մեկը, մոտիկից շփվելով Մոսկվայի ուսոլյուցիոն պրոլետարիատին, Ալավերդյանն այնտեղ անցնում է քաղաքական դաստիարակության մի հոյակապ դպրոց, ձեռք է բերում պարտիական ակտիվ աշխատանքի զգալի փորձ և մարքսիստական տեսական լուրջ պատրաստություն։

Ալավերդյանի մարքսիստական խոր պատրաստության մասին է վկայում նրա դիպլոմային աշխատանքը՝ «Ինակարանային հարցը Մոսկվայում»

[45] Ինստիտուտում սովորելու տարիներին Ս. Ալավերդյանը տնտեսական և այլ պայմանների հետևանքով մի քանի անգամ ստիպված է լինում ընդհատել ուսումը։ Մինչև 1914 թ. հունիսը նա հաջողությամբ քննություններ է հանձնում Ռուսաստանի պատմությունից, քաղաքատնտեսությունից, տնտեսական ուսմունքների պատմությունից, տնտեսական քաղաքականությունից, տնտեսական աշխարհագրությունից և վիճակագրությունից, ֆինանսների մասին գիտությունից, իրավունքի ընդհանուր թեորիայից, քաղաքական ուսմունքների պատմությունից, պետական իրավունքից և այլ առարկաներից (Տե՛ս МОГИА, ф. 417, оп. 7, д. 843, л. 28).

[46] Տե՛ս МОГИА, ф. 417, оп. 7, д. 843, л. 8.

վերնագրով[47], որի հիմնական հարցադրումների վրա անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել։

Իր հետազոտությունը գրելիս Ալավերդյանը ղեկավարվել է մարքսիզմի ուսմունքով և մասնավորապես Ֆ. Էնգելսի «Բնակարանային հարցի շուրջը» աշխատության դրույթներով։ Փաստական նյութը նա վերցրել է գրականությունից և իր սեփական ստուգումներից, դիտողություններից։

Աշխատության մեջ ցույց է տրվում, որ կապիտալիզմի զարգացման հետևանքով արագորեն ընդարձակվում են քաղաքները, բուռն թափով աճում է քաղաքային բնակչությունը, ստեղծվում են բնակարանային անտանելի պայմաններ, որի ողջ ծանրությունը գլխավորապես ընկնում է բանվոր դասակարգի վրա, որպես շահագործվող դասակարգի։ Բնակարանային հարցը տնտեսական քաղաքականության պրոբլեմներից մեկն է, ժամանակակից կապիտալիստական քաղաքի հարցը, գրում է Ալավերդյանը, բնակարանային վատ պայմանները հասարակական մեծ չարիք են և բխում են մասնավոր սեփականության վրա հիմնված կապիտալիստական հասարակարգի էությունից։ Հենվելով Էնգելսի վերոհիշյալ աշխատության վրա և մեջբերում անելով նրանից, Ալավերդյանը նշում է, որ բնակարանային հարցի «...վերջնական լուծումը, այսինքն բնակարանային աննորմալ պայմանների ոչնչացումը, հնարավոր է միայն գոյություն ունեցող տնտեսական հարաբերությունների արմատական փոփոխության հետևանքով»։ «Վերջ դնել բնակարանային կարիքին կարող է միայն մի միջոց,—ասում է Էնգելսը,—այդ տիրապետող դասակարգի կողմից աշխատավոր դասակարգի, ընդհանրապես շահագործման և ճնշման վերացումն է»[48]։

Ալավերդյանը ցույց է տալիս, որ Ռուսաստանում չի արվում նույնիսկ այն մինիմումը, ինչ հնարավոր էր անել կապիտալիզմի պայմաններում, բնակարանային անտանելի վիճակը մեղմելու ուղղությամբ որոշ դրական արդյունքների հասնելու համար։ Մերկացնելով Մոսկվայի քաղաքային ինքնավարության, որտեղ նստած էին հողատերերն ու տանտերերը, հանցագործ գործունեությունը, Ալավերդյանը գրում է. «...Եվ քանի որ ամբողջ քաղաքային բնակչության բախտը վստահված է տնատերերի մի փոքրիկ խմբի, ապա այդ պայմաններում, իհարկե, մտածել անգամ չի կարելի նրանց կող-

---

[47] Ս. Ալավերդյանի «Բնակարանային հարցը Մոսկվայում» աշխատության հեկտոգրաֆով տպված օրինակը գտնվում է Մոսկվայի մարզային պետական պատմական արխիվում։ Աշխատությունը բաղկացած է 143 հեկտոգրաֆիկ թերթից, ունի ներածական, 13 գլուխ (Մոսկվայի աճը. Բնակարանների թանկացումը Մոսկվայում. Բնակարանների դերբնակեցումը Մոսկվայում. Մահճային-խցիկային բնակարաններ. Մասնավոր գիշերօթևաններ, խիտրով շուկան. Ֆաբրիկային գիշերօթևաններ Մոսկվայի ձեռնարկություններին կից ապրող բանվորների բնակարանային պայմանները, հացթուխային արտադրության բանվորների հետազոտության տվյալները. Բնակարանային վատ պայմանների ազդեցությունը հիվանդությունների, հանցագործությունների և այլնի վրա Մոսկվայում. Շինարարական կանոնադրությունը և բնակարանային հրահանգը. Մարդասիրությունը բնակարանային հարցը լուծելու գործում, Սոլոդովնիկյան տներ. Շինարարական ընկերությունները. Տրանսպորտի մոսկովյան ընկերությունը. Մոսկվայի վարչության ծառայողների բնակարանային պայմանները բավարարելու համար ընկերության տունը. Մոսկվայի ապագա մունիցիպալ շինարարության պլանը. Արվարձանները և ավանները) և օգտագործված գրականության ցանկ։

[48] МОГИА. ф. 417, оп. 39. д. 249, л. 6—7.

մից բնակչության, առավել ևս քաղաքային պրոլետարիատի, լայն խավերի շահերի պաշտպանության մասին»[49]։

Այնուհետև փաստական հարուստ նյութերի հիման վրա Ալավերդյանը նկարագրում և վերլուծում է աշխատավորության համար բնակարանային սարսափելի պայմանները Մոսկվայում։ Ահա մի քանի օրինակներ, որ բերվում են այլ և սեփական հետազոտություններից։ «Խցիկում, որտեղ ընդամենը 3 մահճակալ կա, ապրում են 13 մարդ, հատակից և նկուղի բարակ միջնորմից ուժեղ քամի է փչում։ Կեղտոտությունը, գարշահոտությունը, նեղվածքը հնարավոր չէ նկարագրել։ «Բնակարան մտնելիս թվում է, թե ընկել ես արտաքնոց, այնքան որ ուժեղ է գարշահոտությունը»։ «Սարսափ է ազդում, երբ նայում ես այդ բնակարանը, բառիս բուն իմաստով քարանձավ։ Շնչելու համար օդ չկա»։ «Երկու մութ խցիկ, նեղվածք (9 տղամարդ, 7 կին և 4 երեխա)»։ «Խոնավությունն այնքան ուժեղ է, որ բնակիչների բառերով ասած, առավոտյան բոլորը տառապում են գլխացավով, քիչ է լույսը»[50]։

Ս. Ալավերդյանը անձամբ հետազոտել էր Մոսկվայի հացթուխային արտադրության 36 հաստատություն։ «Երեթե բոլոր շենքերը, որոնք ես հետազոտեցի,— գրում է նա,— կեղտոտ էին։ Միայն 3—4 սենյակ էին քիչ թե շատ բարեկերպ։ Ներքնակները և անկողինները բոլոր սենյակներում կեղտոտ էին։ Երկու մեծ սենյակները անհնարին էր մտնել, այնքան սարսափելի խեղդուկ էր նրանց օդը։ Այդ սենյակների դուռը բացվում էր անմիջապես արտաքնոցից, իսկ սենյակները բանվորների ննջարաններն էին։ Առանձնապես կեղտոտ, խոնավ և մռայլ էին կիսանկուղային շենքերը»[51]։

Աշխատության մեջ ցույց է տրված բնակարանային աննորմալ պայմանների կործանիչ հետևանքները,— հանցագործության, հարբեցողության, վարակիչ հիվանդությունների, անբարոյականության, մահացության աճը, որը ցարական Ռուսաստանում սարսափելի չափերի էր հասնում։

Ալավերդյանը ընդգծում է, որ ռուսական կապիտալիստները և ցարական իշխանությունները, ընկնելով իրենց նեղ, դասակարգային շահերի, սեփական շահույթի հետևից, գաղանային շահագործման են ենթարկում բանվոր դասակարգին. «...ամենակոպիտ կերպով ներխուժում են նույնիսկ բանվորի հոգու մեջ, իրենց ենթարկելով նրանց անձնական կյանքը և անդամալույծ անելով նրա դասակարգային ինքնագիտակցությունը»[52]։

Սրանից քիչ հետո Ալավերդյանը բերում է ՌՍԴԲՊ ծրագրի պահանջը՝ բանվորների բնակարանների մասին, որտեղ ասված էր. «Տեղական ինքնավարության օրգանների հսկողությունը բանվորների ընտրած ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ձեռնարկատերերի կողմից բանվորներին հատկացվող բնակարանների սանիտարական վիճակի, ինչպես և այդ բնակարանների ներքին կարգապահության ու դրանք վարձու տալու պայմանների վրա՝ նպատակ ունենալով պաշտպանել վարձու բանվորներին, նրանց, որպես մաս-

---

49 Նույն տեղում, թ. 8—9։
50 МОГИА, ф. 417, оп. 39. д. 249. л. 28—44
51 Նույն տեղում, թ. 64—75։
52 Նույն տեղում, թ. 95։

նավոր անձանց և քաղաքացիների կյանքին ու գործունեությանը ձեռնարկատերերի միջամտելուց»[53]։

Իր դիպլոմային աշխատանքում Ալավերդյանը մերկացնում է նաև արևմտա-եվրոպական կապիտալիզմի, անգլո-ամերիկյան իմպերիալիստների կեղեքիչ քաղաքականությունը, նշում է, որ նրանց բոլոր փորձերը ռեֆորմների միջոցով բարելավելու աշխատավորության, բանվորների բնակարանային պայմանները էական դրական արդյունքների չեն հասցրել և չեն կարող հասցնել, այդ բոլորը այնտեղ արվում են մի նպատակով՝ խաբել աշխատավորությանը, հեռու պահել նրանց դասակարգային պայքարից, որը գնալով ուժեղանում էր։ Խուսափելով ցարական արգելքներից, որի պատճառով հնարավորություն չունենալով մի շարք հարցեր գնելու ուղղակի և ամբողջ սրությամբ, Ալավերդյանը ստիպված էր մարքսիստական դրույթներն անցկացնել շատ դգույշ, մարքսիզմի լեգալ պրոպագանդայի համար այն ժամանակ «ընդունելի» ձևերով. դրանով պետք է բացատրել, որ իր կողմից օգտագործված Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատությունները (բացառությամբ Ֆ. Էնգելսի «Բնակարանային հարցի շուրջը» երկի), և պարտիայի ծրագիրը նա գրականության ցանկում ցույց չի տվել։

Ալավերդյանի աշխատության հիմնական միտքն այն է, որ աշխատավոր մասսաների, բանվոր դասակարգի տնտեսական, այդ թվում նաև բնակարանային պայմանների արմատական բարելավմանը կարելի է հասնել միայն ու միմիայն շահագործող դասակարգերի տապալման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման միջոցով։

Ս. Ալավերդյանի «Բնակարանային հարցը Մոսկվայում» աշխատությունը գիտահետազոտական լուրջ գործ է, գրված կրթված մարքսիզմի գրչով։

1915 թ. հոկտեմբերի վերջին Ալավերդյանը վերադառնում է Թիֆլիս, կարճ ժամանակով Բուխարայում մնալուց հետո նա գալիս է Սարիղամիշ, որտեղ և շարունակում է իր ռևոլյուցիոն-պարտիական աշխատանքը մինչև 1918 թ. սկիզբը։ 1918 թ. նա ռևոլյուցիոն աշխատանք էր տանում Թիֆլիսում, իսկ 1918 թ. վերջից մինչև 1920 թ. օգոստոսը՝ Երևանում, որպես Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ականավոր դեկավարներից մեկը։

Իր գործունեության բոլոր շրջաններում Ս. Ալավերդյանը միշտ էլ բուռն հետաքրքրություն է ցուցաբերել Մոսկվայում ծավալվող ռևոլյուցիոն շարժումների, բոլշևիկյան աշխատանքների նկատմամբ, կապեր է պահպանել այնտեղի իր ընկերների հետ։ Պատահական չէ, որ 1920 թ. օգոստոսի 13-ին, Երևանի բանտից գնդակահարության տանելիս Ալավերդյանը կրկին հիշում է Մոսկվան, ռևոլյուցիոն պայքարի իր ընկերներին։ Արտահայտելով իր խոր հավատը Հայաստանում սովետական կարգերի մոտալուտ հաղթանակի նկատմամբ, Ս. Ալավերդյանը դաշնակցական դահիճներին ասում է. «...Իմացած եղեք, որ իմ թափվելիք արյան յուրաքանչյուր կաթիլի համար դուք կպատասխանեք ձեր հարյուրավոր համախոհների կյանքով։ Մի կարծեք, որ ձեր չարագործությունը թաքուն կմնա։ Ինձ ճանաչում է Մոսկվան, ինձ ճանաչում

---

[53] Նույն տեղում, թ. 66։ Տե՛ս ՌՍԴԲՊ ծրագիրը՝ ընդունված պարտիայի 2-րդ համագումարում։ ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, I մաս, Երևան, 1954, էջ 47—48։

է Բաքուն, և այն ընկերները, որոնց հետ աշխատել եմ, վրեժխնդիր կլինեն իմ մահվան համար։ Կեցցե՞ Հայաստանի Կոմունիստական պարտիան»։

Մոսկվայի Առևտրական ինստիտուտի նախկին ուսանողներ, հին բոլշևիկներ Կ. Վ. Օստրովիտյանովը, Յա. Ֆ. Բոգմոլովը, Վ. Պ. Զեբոաարյովը, Մ. Վ. Նեսաերովը, Լ. Դ. Սոկոլսկին և ուրիշներ, որոնք այժմ ապրում և աշխատում են Մոսկվայում, իրենց տպագիր և բանավոր հիշողություններում բազմիցս նշում են Ստեփան Կարպովիչ Ալավերդովի Մոսկվայում տարած ռևոլյուցիոն պարտիական ակտիվ աշխատանքի մասին, հիշում են «Ստլոպային» որպես կայուն և նվիրված բոլշևիկի։

Այդպիսին էլ նա մնաց մինչև իր հերոսական կյանքի վերջը։